ՀՏԴ:78(479.25)

Doi:10.54503/0135-0536-2025.1-329

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԱԺՇՏԱԳԵՏՆԵՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

Հունվարի 9–11-ը Ժնևի ու Լոզանի համալսարաններում տեղի ունեցավ Հայկական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության (AIEA) 16-րդ դպրավոր համաժողովը, որի աշխատանքներին մասնակցեց ԳԱԱ արվեստի ինստիտուտի պատվիրակությունը:

Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Անանա Արևշատյանի *«Տիգրան Մանսուրյանի նորօրյա շարականերգությունը» (ֆրանսերեն) զեկուցումը նվիրված էր հայ ժամանակակից երաժշտության ականավոր ներկայացուցիչ Տիգրան Մանսուրյանի՝ վերջին տասնամյակների այն երկերին, որոնցում տեղ են գտել կոմպոզիտորի ոճական զարգացման ուշագրավ դրսևորումները՝ շրջադարձ դեպի հայ հոգևոր երգարվեստն ու պոեզիան: Մասնավորապես առաջին անգամ քննվել են Ներսես Շնորհալու խոսքերով գրված «Հավատով խոստովանիմ» աղոթաշարի երկրորդ տետրը (2018) և «Օրհներգ-Նավապետ բարի» ըստ Մաշտոցի ապաշխարության շարականի (2021), մեծակտավ գործերը բարիտոնի, խառը երգչախմբի և նվագախմբի համար: Բանախոսի կարծիքով, չդիմելով երաժշտական մեջբերումներին, Մանսուրյանը ստեղծել է մի նոր շարականերգություն, որի երաժշտական լեզուն որքան արդիական է, նույնքան էլ՝ ազգային: Եվ այդ երկերում հայ երաժշտության ավանդական հինավուրց ելևէջները զուգորդվում են ժամանակակից հնչյունային ընկալումների և կոմպոզիտորի անհատական ոճի հետ:*

«Հայ երաժշտարվեստի մեկնությունները օտար աղբյուրներում» (անգլերեն) բանախոսության մեջ Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանը, *ամփոփ անդրադառնալով հայ-թուրքական երաժշտական կապերի բարդ և վիճահարույց բնույթին, ներկայացրել է հայ ավանդական երաժշտության ժանրային համակարգի ծագումնաբանական խնդիրներն ու զարգացման առանձնահատկությունները Մերձավոր Արևելքի մշակութային համատեքստում: Բանախոսը լուսաբանել է օտարալեզու (մասնավորապես՝ թուրք-ադրբեջանական) աղբյուրներում XX դ. սկզբին ձևավորված և առ այսօր շրջանառվող, այսպես կոչված, ժխտողական դիսկուրսի հիմքերն ու հեռահար նպատակները, որոնք միտված էին հայ ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտարվեստի դերի և նշանակության անտեսմանն ու խեղաթյուրված մեկնաբանմանը, ինչպես նաև շոշափել արևմտյան որոշ հետազոտություններում հայ երաժշտությանն ու կոմպոզիտորական արվեստին առնչվող կամայական ու հակագիտական քննարկումների հարցերը, որոնք թուրքական դիսկուրսի ժամանակակից արձագանքներն են և յուրովի խթարում են հայ երաժշտարվեստի*

էթնոմշակութային նկարագիրը:

«Հայկական վերածննդի նախադրյալները քերականական մեկնություններում» (հայերեն) զեկուցման մեջ երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Մհեր Նավոյանը հակիրճ անդրադարձել է հայկական վերածննդի ուսումնասիրության պատմությանը՝ նկատելով, որ հայկական վերածննդի դրսևորման առանցքային ոլորտներից մեկը հայ միջնադարյան երաժշտաբանաստեղծական արվեստն է: Միջնադարի երաժշտաբանաստեղծական միակառույց մշակութային իրողությունից արհեստականորեն դուրս է թողնվել նրա երաժշտական բաղադրիչը՝ չեշտելով սոսկ բանաստեղծությունը: Նավոյանը կարևորել է միջնադարյան տեսական բնույթի այն հուշարձանները, որոնք հայ միջնադարյան երաժշտաբանաստեղծական արվեստի՝ խնդրին առնչվող հարցերը ներկայացնում են համաձույլ: Քերականական մեկնություններից բանախոսը հատկապես անդրադարձել է վաղմիջնադարյան փուլի հայ քերականական մեկնություններից որոշ ձևակերպումների, որոնք կարող են վկայել աշխարհիկ արվեստի ինքնուրույնացման մասին, և որպես եզրահանգում նկատել է, որ վաղմիջնադարյան հայ մեկնիչների կողմից առաջարկվող մեթոդի ընդհանուր բնութագիրը «Հագներգություն» և «Քաջոլորակ» եզր-հասկացությունների տեսանկյունից դիտարկելիս, ի վերջո, հանգում են հայկական վերածննդի գաղափարին:

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ